

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ
ՕՐԵՆՔ

Հոդված 1. «ՀՀ ջրային օրենսգրք» օրենքի 1-ին հոդվածի հասկացություններում «*էկոլոգիական թողք՝ ջրի նվազագույն ելք, որն ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը և ինքնավերականգնումը*» շարադրել նոր՝ «*էկոլոգիական թողք՝ ջրի նվազագույն ելք, որը տարվա բոլոր եղանակներին ապահովում է ջրային ռեսուրսի և դրան հարակից տարածքների, ինչպես նաև ջրային ռեսուրսում ու դրան հարակից տարածքներում առկա բուսական և կենդանական տեսակների բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանները՝ պահպանելով էկոլոգիական հավասարակշռությունը և դրա ինքնավերականգնումը*» խմբագրմամբ:

Հոդված 2. «ՀՀ ջրային օրենսգրք» օրենքի հոդված 99-ի 5) կետի վերջում ավելացնել «, առաջնային համարելով սահմանված էկոլոգիական թողքի պահպանումը» բառերը:

Հոդված 3. «ՀՀ ջրային օրենսգրք» օրենքի հոդված 103-ի «Արգելվում է ջրային համակարգի օգտագործման հանձնելը և օգտագործումը, որը ապահովված չէ՝» պարբերության 2) կետի «վերցվող և թափվող» բառերից հետո ավելացնել «, այդ թվում էկոլոգիական թողքի կետի մուտքի» բառերը:

Հոդված 4, Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի հոդված 63²-ի 2-րդ պարբերության «Ջրօգտագործման թույլտվության պահանջները չկատարելը» բառերից հետո ավելացնել «, բացառությամբ էկոլոգիական թողքի» բառերը, մնացածն ինչպես տեքստում:
Հոդված 2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում ավելացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ՝

Հոդված 63²⁻¹ Առանց էկոլոգիական թողքի պահպանման, կամ առանց էկոլոգիական թողքի հաշվառման բնական ջրհոսքերի (գետերից) մակերևույթային հոսքից ջրառ իրականացնելը

-առանց էկոլոգիական թողքի պահպանման բնական ջրհոսքերի (գետերից) մակերևույթային հոսքից ջրառ իրականացնելն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրապատիկի չափով:

- առանց էկոլոգիական թողքի չափիչ սարքի բնական ջրհոսքերի (գետերից) մակերևույթային հոսքից ջրառ իրականացնելը առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիգհարյուրապատիկի չափով:

Հոդված 3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի հոդված 242-ում 63² թվից հետո ավելեցնել « և 63²⁻¹ » բառերը:

Հոդված 4, Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀՀ
ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ

1. Անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 53 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգին»: Համաձայն Հայեցակարգի Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության Հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Միջոցառումների ցանկի 6-րդ կետով նախատեսված է հաշվի առնել փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարության և շահագործման ժամանակ էկոլոգիական թողքի չպահպանման, ինչպես նաև դրա համար սահմանված չափաքանակների չհաշվառման դիտարկված համընդհանուր դեպքերը և կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքում. ինչը փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման գործընթացում կապահովի ջրային ռեսուրսների բնական օգտագործումը, մասնավորապես, տարվա բոլոր եղանակներին ջրային ռեսուրսի և դրան հարակից տարածքների, ինչպես նաև այդ տարածքներում առկա բուսա և կենդանատեսակների գոյության համար կտա անհրաժեշտ ջրաքանակով ապահովման երաշխիքներ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքում էկոլոգիական թողքը բացառապես սահմանվում է որպես «ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը և ինքնավերականգնումը» ապահովող նվազագույն քանակություն, ինչը սակայն չի բնութագրում ջրային ռեսուրսի

ամենակարևոր՝ հողի, բուսա և կենդանատեսակների գոյության համար անհրաժեշտ կենսապայմաններ ապահովող հատկանիշները: Այս, ինչպես նաև էկոլոգիական թողքի քանակությունների չպահպանման համար համարժեք պատասխանատվության միջոցների բացակայությունը ՀՀ օրենսդրական դաշտում իր հետևանքներն է թողել Հայաստանի փոքր հիդրոէներգետիկայի գործունեության ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա գործելով զգալի բացասական ազդեցություններ: Պետական լիազոր մարմինների կողմից իրականացված երկարաժամկետ ստուգումների և մոնիտորինգի, բնապահպանական հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՓՀԷԿ-երում առկա են մի շարք խնդիրներ, և հատկապես էկոլոգիական թողքի չվերահսկման արդյունքում վտանգված են փոքր ՀԷԿ-երի գլխամասից՝ ջրառի կետից մինչև կայանային հանգույց ընկած տարածքներում առկա բուսական և կենդանական, այդ թվում, ձկնային տեսակները: ՀՀ գիտնականների կողմից արձանագրված են գետային կենսաբազմազանության և տեղաբնակ ձկնատեսակների տեսակային կազմի ու նրանց վտանգների քանակական ցուցանիշների բացասական փոփոխությունները: Կասկադային ՓՀԷԿ-երի պարագայում բուսածածկի աղքատացումը հանգեցնում է նաև հողերի անապատացման ռիսկերի:

Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ են համարժեք իրավական կարգավորումներ, արդյունավետ վերահսկողական մեխանիզմների մշակում և ներդրում:

23. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Փոքր հիդրոէներգետիկայի զարգացման համար Հայաստանի Հանրապետությունում ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որտեղ ամրագրվել է ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականությունը, նախանշվել են ռազմավարական ծրագրերը և նորմավորվել է կարգավորող դաշտը:

Հայաստանի Հանրապետության օրենքը «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին».

Հայաստանի Հանրապետության օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձարկման մասին »

Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգիրք

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք

Հայաստանի Հանրապետության Անտառային օրենսգիրք

Հայաստանի Հանրապետության օրենքը «Կենդանական աշխարհի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքը «Բուսական աշխարհի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքը «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական, տեխնիկական վերահսկողության մասին»

Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետությունում տուգումների և անցկացման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքը «Բնապահպանական վերահսկողության մասին»

Հայաստանի Հանրապետության «Հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգ»

Հայաստանի Հանրապետությունում ստեղծված են բազմաթիվ մեխանիզմներ՝ խթանելու վերականգնվող էներգետիկ աղբյուրների օգտագործմամբ էլեկտրաէներգիայի արտադրությունը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Հաշվի առնելով փոքր հիդրոէլեկտրակայանների գործունեության ժամանակ մարդու և շրջակա միջավայրի բնական և հավասարակշռված կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, հնարավոր բնապահպանական վտանգների և աղետների կանխարգելումը, օրենսդրական խախտումների դեպքում համարժեք պատասխանատվության կիրառումը, որպես հետագա հնարավոր խախտումների կանխման գործիք, անհրաժեշտ է ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման բոլոր փուլերում ապահովել համապատասխան օրենսդրական հենքով:

5. 4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է օրենսդրական կարգավորման ճանապարհով, ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման փուլերում մեղմացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները, համալրել պետական լիազոր մարմինների կանխարգելիչ գործիքակազմը, խթանել փոքր հիդրոէներգետիկայի

գարգացմանը, իրականացնել ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները: